Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿԾ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Կոտայքի մարզ – ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31. 12. 2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության** շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, թեյ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է Հրազդանում 37, Չարենցավանում՝ 36 շահառու:
- **Սոցիալական խորհրդատվության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 3 դեպքի վարում (1 անձի համար ընտանիքների անապահովության գնահատման համակարգում վերափաստագրում, 1 անձի համար անվճար բուժօգնության կազմակերպում, 1 անձի համար աջակցող միջոցների ստացում): Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 24 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Այլ ծառայությունների տրամադրում.**
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 12 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել:
  - Հրազդանի Ճաշարանի 10 շահառու մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝ «Տարեցների միջազգային օր», «Տրակտատ թաշկինակի մասին» ներկայացման դիտում, «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացման դիտում, «Նոր տարի», կենտրոնում աճպարարի ներկայացման մասնակցություն:
  - Չարենցավանի ճաշարանի 27 շահառու մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝ շահառուների ծննդյան օրերի նշում, հոգևոր զրույցներ քահանայի հետ, անորյա միջոցառում:
  - 6 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

Հրազդանի բարեգործական ճաշարանում.

Միջոցառումներ նվիրված տարեցների միջազգային օրվան, այց Հրազդանի դրամատիկական թատրոն, Երևանի Հ.Պարոնյանի անվան երաժշտական թատրոն, «Ծիծաղող աստղեր» ՀԿ-ի աճպարար՝ Վինսենտ Կալիի այց, ամանորյա միջոցառում ՅԿ-ում (տե՛ս հետևյալ

հղմամբ՝https://shorturl.at/vvkBo, https://shorturl.at/wPxF4, https://shorturl.at/9JNsy, https://shorturl.at/ypyeR, https://shorturl.at/ntl7A, https://goo.su/JTr1pa):
Այլ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/XW1JD):
Չարենցավանի բարեգործական ճաշարանում.
Միջոցառումներ՝ տարեցների միջազգային տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://t.ly/F4due ): Թեմատիկ զրույց բուժքրոջ հետ(տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://t.ly/v7W2H ): Հոգեբանական հարցում, տեսահոլովակ՝ Հոգեկան առողջության խնամք թեմայով (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://t.ly/_wdAM ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Հրազդանի Ցերեկային կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 2 համակարգող խորհրդի նիստերին եւ հոգաբարձուների 2 նիստերին:
Չարենցավանի կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 2 համակարգող խորհրդի նիստերին, ձեռք է բերվել համաձայնություն առաջադրել կենտրոնի կարիքավոր շահառուների ցանկ, որոնք նույնպես կստանան համապատասխան աջակցություն Սոցիալական Աշխատողների Ասոցացիայի կողմից՝ ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ:
Չարենցավանի և Հրազդանի սոցիալական աշխատողները մասնակցել են «Հայկական Կարիտաս»-ի կողմից կազմակերպված «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամքը» թեմայով օնլայն դասընթացին:
Մարզում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 73/72 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 45 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 11 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 2 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 23 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 45 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 73 |
| 3. | Այլ ծառայություն (նշել)<br>Հոգեբանական ծառայություններ<br>Միջոցառումների կազմակերպում | 6<br>12<br>37 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մշիթարյան «16» 12.2024թ